ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

Rédacteur en chef et Directure

Tigran Nazarian

ԹԻՖԼԻՍ ՅՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ XX—1909 Tiflis

Հանամարդկային հաւերաշխութեան մտորումներ

Երկու տարի սրանից առաջ Բորդօի հրաշագեղ Ալհամբրիայում Ֆրանսիան ողջունում էր Միջազգային Մամուլը։ Ֆրանսիայի գեղագէտներն ու արուեստագէտները իրանց հանճարը գործադրել էին պճնելու, առանց այն էլ շատ փառահեղ, Alhabra-ն։

Ֆրանսիայի ամենաընտիր ծաղիկները Ալպերի գագաթներից, հովիտներից, Բասքի լանջերից, Միջերկրականի ափերից մինչև ովկիանոսի տափարակները, բուրում էին այստեղ անուշ և արբեցնում հիւրերին։ Աշխարհի բոլոր գրիչները զարդարած էին դափնեայ տերևներով, անուշաբոյր փարթամ և անթառամ ծաղիկներով։ Հանգցրել էին արհեստական էլէքտրիկ լոյսը և հրաշագեղ հսկայ սրահը լուսավառել բիւր մոմերով, որ դրած էին հնադարեան ջահերի և աշտանակների մէջ։ Այստեղ էր աշխարհիս մամուլը այս երեկոյ ճաշում։ Սեղանապետը այս երեկոյ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր պ. Pichon մի կողմից ունենալով Միջազգային Մամուլի Դաշնակցութեան ընդհանուր նախագահ պ. Singer-ին, միւս կողմից իր նախկին թերթի՝ Temps լրագրի պ. հրատարակիչն և շուրջը աշխարհիս մամուլի ներկայացուցիչներն իրանց տիկիններով ու Ֆրանսիայի և եւրոպայի դիպլոմատներից շատերին, բաժակը բարձրացրեց նախ՝ ի պատիւ մամուլի, մամուլի, որի ներկայացուցիչ լինելն իր համար պատիւ և հրճւանք է համարում, մամուլի, որ նրա ձեռքը տւաւ Ֆրանսիական արտաքին գործերի ղեկը։



ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ ԿԱՅՍՐ

Ռուսաստանի վերածնման յօբելեանի առիթով։

Դիւթական սրահը ցընծում էր. երաժշտութիւնը նւագում էր Վերդու Վիօլետի վիշտը։ Տիկինները, չարաճճի նազանի օրիորդները հովհարներով մոմերն էին հանգցնում։ Ութսնամեան համաշխարհային երկունքի մէջ էր...

Սակայն կոնգրէսն վերջացել էր արդէն, իսկ հերթական XII-րդի ուր ժողովւելը չէր որոշւել։

Նոյն տարւում անորոշ եղրակացութիւնն էր և չորս տարի սրանից առաջ երբ տոկուն Բելգիան, Հոլանդիայի լծից իր ազատման յօբելեանին նշւում էր համաշխարհային ցուցահանդէս և այդ տարին Միջազգային Մամուլի Դաշնակցութեան կոնգրէսն այնտեղ վերջանալուց յետոյ սկսւել էին սովորական էքսկուրսներն ու տօնախմբութիւնները։

Երկրի բոլոր տափարակները, լեռների լանջերն ու գագաթները երկաթուղու խիտ ցանցերով միացրած Բելգիան, ամիսներով իր հիւրերի տրամադրութեան տակ դնելով իր նաւերն ու երկաթուղիները, տրամայներն ու աւտօմաբիլները, ի միջի այլոց մի ամբողջ օրով խնճոյքի էր հրաւիրել հիւրերիս Վատերլօ, որ պէտք է գնայինք ձիակառքերով։ Օպերային թատրոնի առջև վաղ առաւօտից արդէն կանգնած էին մի քանի հարիւր կառքեր՝ լանդօ, ֆիակր, օմնիբուս։ Սակայն մի մունջ բանակռիւ կարծէք մղւում էր էքսկուրսանտների մէջ և տատանւում էին շատերը տեղ բռնելու կառքերում։ Վերջապէս համաձայնութիւնը կայացաւ և իւրաքանչիւրս իր ուզածին պէս նստեցինք կառքերում։

Հոլանդուհի մատենագիր խաղաղասէր տ. Lucy Audreitch, մեր խմբի չքնաղ աստղն ու եռանդը, պրօֆ. Շւարցն ու իր նազանի դուստրը և ես մի կառքում էինք տեղաւորւել։ Հոյակապ խճուղիներ անցնում էր անտառների, բլրների, գետակների միջով։ Բիւր կամրջներով շաղկապւած էին ձորերն ու գետակները։ Ճանապարհին ամեն տեղ ժողովուրդը սիրալիր ողջոյների հետ ծաղիկներ էր սփռում մեր առջև։ Յանկարծ անտառի միջից թնդաց մարսէլիոզի հետ և գերմանական, անգլիական և վերջը եւրոպական բոլոր պետութիւնների օրհներգը։ Մի քանի րոպէից յետոյ մենք Վատերլօ էինք։

Մեր կառքերը շրջանաձև անցնում էին այն պատմական շինութեան մօտով, ուր Նապալէօն ապաստանւել էր։ Մինչև օրս էլ պետական պատիւ է տրւում այդ պատմական վայրին, իսկ պանդոկապետը, ինչպէս ասում էին, ժամանակ չէ ունենում իր անթիւ և շահաբերական եկող բոլոր հիւրերին ողջունելու։

Այստեղ մեզ իւրաքանչիւրիս բերին մի-մի սիրուն կողով, մէջը՝ սիսեռ, բաժակ, դանակ, պատառաքաղ, անձեռոցիկ, մի շիշ շամպայն, մի շիշ հին գինի, կէս շիշ հանքային ջուր, տապակած մի վառիկ, հորթի խաշլամա և զանազան բուտերբրօդներ։

ՎԻԼՀԵԼՄ II
Կայսր Գերմանիայի

Դիտելով շրջակայքը, իջանք կառքերից և թափեցինք հրաշագեղ անտառը։ Թնդում էր երաժշտութիւնը, պարում, վազվզում էինք ամենքս։ Շատ տաճկահայ կօդակներ լուսանկարում էին ուրախ խմբերը։ Կանայք գետնի վրայ նստած, իւրաքանչիւրն իր կողովը լցրած, նախաճաշում էինք։ Իսկ սունդուկներով ծառերի տակ զարդած տաճկահայ դիւժիններով շամպայնի շիշերը սպասաւորներն էլ մի կողմից էին անընդհատ բանում, որով հեղեղում էինք Վաահելօի անտառը։ Հանուոր պ. Taunay, կոնգրէսի հոգին ու հրապոյրը, առանձին օւսմիօնների էր արժանանում, մանաւանդ գերմանական լրագրողների կողմից։ Հիւրասէր Բելգիան, ինչպէս ասում են, կաշուից դուրս էր գալիս, որ չըլինի թէ մէկի հին վէրքերը մրմնջան...

Վերջապէս երեկոյեան վերադարձանք, կառապաններին ճանապարհին խմացնելով կամ թէ անցնող վիւժացիներին նետելով մեր կողովներում լիքը մնացած շամպայնի շիշերը։

Հետևեալ տարին կօնգրէս չըկայացաւ, բայց սրա յաջորդ տարին Ֆրանսիայում վերև պատմածս կօնգրէսին պ. Schweitzer բերել էր հետը գերմանական հրապարակախօսների մի շատ ստւար քանակ, ակներև որակով։

Էդուարդ II իր յատուկ քարտուղարի միջոցով հրաւիրում էր Միջազգային Մամուլի Դաշնակցութեան հետևեալ տարւայ կօնգրէսն Անգլիայում կայացնել։ Սակայն հաստատակամ, կենսունակ Գերմանիան ոչ մի կերպ չըկամեցաւ զիջանել և որոշեց XII-րդ կոնգրէսն ժողովել Բերլինում, որ և կայացաւ անցեալ աշնան Ռայխստագում։

***

Ժամանակակից հզօր Գերմանիան էլ գրկաբաց և էլ աւելի մեծ շուքով ընդունեց տիեզերքի մամուլը։ Ցոյց տւաւ այն ափաշկարայ առաջադիմութիւնը, որ նա իր անդադրում, գիտակից և տոկուն աշխատանքով ձեռք է բերում։



ԲԵՐԼԻՆ. ՌԱՅԽՍՏԱԳ ԵՒ ԲԻՍՄԱՐԿԻ ԱՐՁԱՆԸ



ՎԱՅՄԱՐ. ԳԷՕԹԷԻ ԵՒ ՇԻԼԼԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Գերմանիան ցոյց տւաւ իր օր-օրի վրայ մեծացող և հոյակապ Բերլինը իր չքնաղ շրջակայքով։ Ցոյց տւաւ թէ ինչպէս է նա պահպանում Գէօթէի, Շիլլերի յաւիտենական օթևանները, կատարեալ հմայք Վայմարը։ Ապա Ռէյնի իր ափերը, մշակւած դաշտերը և Բօրդօի ու Շամպանիայի ողկոյզներից ոչ պակաս իր այգինները։ Ցոյց տւաւ իր շատ քաղաքները, գործարանները, նաւահանգիստները, կուրորտները։ Մենք մեր աչքով տեսանք, մեր ականջներով լսեցինք, մեր ձեռքերով շօշափեցինք Գերմանիայի գիտութեան, արուեստի, գրականութեան, արհեստի և արդիւնաբերութեան մէջ արած հսկայական յաղթանակները։

Սակայն այդ բոլորը տարածելու համար շատ է փոքր գերմանական երկիրը։ Սրան պէտք է աւելի ընդարձակ հող իր քաղաքակրթութիւնը տարածելու համար և ահա նա երկնքում տաւառնող արծիւների պէս օդին էլ է կամենում տիրապետել և նրա միջով սլանալ ու ծովերի ովկեաններն էլ իրան հպատակեցնել։ Գերմանիայի այդ բը-

նական պահանջն անշուշտ պիտի յաղթանակէ, եթէ իսկապէս հաւատում հնք, որ արդար, տոկուն աշխատանքն է, որ պինւած ճշմարիտ դիտութեամբ և լոյսով բերում է մարդուս անդորրութիւն։ Դալով խաղաղութեան, յամենայն դէպս նա չի խախուտիլ Գերմանիայի ձեռքով, եթէ այդ չըկամենայ Անգլիան։

Իսկ որ Անգլիան չէ կամենում խախտել խաղաղութիւնը, այլ ընդհակառակ ձգտում է նորանոր դաշնակիցներով իր վաղեմի հռչակն ու դիրքը պահպանել, դրան ապացոյց այն ընդունելութիւնը, որ նա արաւ նախ Ռուսիան Դուժայի առաջադէմ անդամներին և ապա մեր Թագաւորը կայսեր։

Եւ թէ Անգլիան և թէ Ֆրանսիան ընդգծեցին իրանց ծրագրային տոս-տերը արտասանելիս, որ ազատ, Սահմանադրական, իրանց բարեկամ և դաշնակից հզօր Ռուսիայի հետ էլ աւելի են շաղկապւում։

Այժմս ինում է միայն որ Սահմանադրական Ռուսիան այսուհետև զսպէ իրան, առանց այն էլ անսահման, իր սահմանները ընդարձակելու տենչանքը. և օգտւելով իր բարեկամներից, իր երկիրը Չանայ մշակելու և ծաղկեցնելու։

Սակայն պիտի կարողանանք ըմբռնել մեզ համար աջող այս մոմենտը, թէ, մեր ձեռներն այրելով ուրիշների համար, գարձեալ պիտի շարունակենք կրակից շագանակներ հանելու։

Յամենայն դէպս Տաճկաստանն ու Պարսկաստանը սթափւելուն ու կազմակերպւելուն մենք խանդոտան չըլինենք, այլ սահմանադրական հզօր Ռուսիայի վերածնման անկեղծօրէն նւիրւենք դէթ մի քառորդ դար։

Իսկ թէ նորաբողբոջ Ճապոնիան Մուկդենում սկսել է իր չարաճճութիւնները, թողնենք նրան հանդիստ, քանի որ Մեծն Պետրոս կայսեր ծրագրի հիմնական յօդւածները՝ լոյս և առաջադիմութիւն արդէն երկու դար է, որ մնում են դեռ անգործադրելի։ Ջանանք այդ ևս փառաւորէն իրագործելու, որպէսզի ապագայում դաշնակից Անգլիան ու Ֆրանսիան մեր ճգնաժամին մասի փաթաթան չըլինեն սահմանադրականին վայել բարձրութեան վրայ մեր չըլինելը...

Մեծն Պետրոս ճիշտ է բացաւ պատուհանների փեղկերը, սակայն յետնորդներս չընկատեցինք, որ հիւսիսից սաւառնող վայրկի հետ բուքն ու բորանը զարնւելով հարաւի խորշակին առաջացնում է անցողական այն քամին, որի ջնասաթեր հետեւանքները ակներև են։ Ուստի անհրաժեշտ է պատուհանների փեղկերն այն ձևով բանալ, որպէսզի այդ հոսանքն անցողական չըլինի։ Իսկ դրա համար ծրագրի երկրորդ յօդւածը լոյս և առաջադիմութիւնը պիտի գործադրւին, իբրև իսկական յորելեան Պալատւայի ճակատամարտի և Կուլկաի նաւճման։

Տ.

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՊԻ ԱՌԹԻՒ XII-րդ ԿՈՆԳՐԷՍԻՆ ԲԵՐԼԻՆՈՒՄ

ՄՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Սուրբ աշխատանքը մի համերաշխ պայքար է սկսել Եւրոպայում կապիտալի դէմ։ Սակայն մեր աժենից մոռրուածները, աշխատանքի չէկը պիտի փութով յաղթանակէ, ոչնչացնելով դրամն ու կապիտալը...

Կռիւը երկու կողմից էլ մեծ է. պայքարող երկու կողմերն էլ դեռ շատ յամառ են։ Այսօր ուշագրաւը Շւեդիայում բանւորական խաղաղ գործադուլն է. մօտ չորս հարիւր հազար բանւոր դադարել են աշխատելուց և չեն հնազանդում կապիտալի բռնի թելադրութիւններին։

Շւեդական կառավարութիւնն ամինապիզր իսկ արգելք չըհանդիսանալով բանւորների պահանջներին և ոչ էլ խառնւելով կապիտալիստների և արդիւնաբերողների լօկաուտին, ազատ է թողել պայքարող երկու կողմերին էլ փոխադարձ միմեանց հասկանալու և համաձայնութեան գալու։

Յետաձգած է և Մոքհօլմում այս ամսի վերջերը կայանալիք խաղաղութեան կոնգրէսն, որին պէտք է մասնակցէր և Լև Տոլստոյ ու պատրաստում էր բեֆերատ այդ կոնգրէսում անձամբ կարդալու։

***

Խաղաղ չէ և հինաւորց արկածախնդիր, երբեմն հզօր իր գաղութային արշաւանքներով և եղուիտների լեգիօններով, Իսպանիան։ Ֆրանսիայից արտաքսւած հոգևորականները տեղափոխւելով իսպանական վանքերը և օգտւելով այն օրէնքից, որ հոգևորականներն ու վանքերը կառավարութեան հարկ չեն տալիս, հիմնել էին մի շարք գործարաններ, մանաւանդ սպիրտային ու մրցում էին երկրացիների, ծանր հարկերով, գործարանների հետ։

Իսպանացիներն ապստամբել են այժմս. քանդում են այդ վանքերը, վարդապետներին ձեծում, սպանում և նրանց չարագործութիւնները եւրևան հանում։ Երիտասարդ Ալֆոնս թագաւորը չընայած, որ ժողովրդի մի մասը, նրա դէմ էլ է դոգուած, այնու ամենայնիւ ազատ շրջում է ժողովրդեան մէջ և անձամբ ստուգում իրերի իսկական վիճակը, հաւատ չընծայելով իր մինիստրներին և խորհրդականներին։

***

Բայց Եւրոպայի հերթական գլուխը ցաւացնողը ոչ այնքան Շւեդիայի գործադուլն է և ոչ էլ իսպանացիների ապստամբութիւնը, այլ Թիւրքիան, Բալկանեան թերակղզին, Պարսից ծոցն ու Ատրպատականը, Դարդանէլն ու Մարաքօն...

Յունաստանին միանալ է ձգտում Կրիտէն։ Թիւրքիան այս լսել անգամ չի կամենում և իր նաւատորմիղը Զմիւռնիայում կազմ-պատրաստ է պահում. իսկ մեծ տէրութիւնները համերաշխ են, և վճռել են յունական արիւն չըթափել...

Կլէմանսօի կաբինետը Դելկասէն խորտակեց։ Շարժառիթը՝ որովհետև պարլամէնտը չընդունեց նրա ծրագիրը ֆրանսիական նաւատորմի մասին։ Քալիէը ընդունեց Կլէմանսօի հրաժարականը։ Նոր կաբինետում մնաց իր պաշտօնի մէջ արտաքին գործերի նախկին մինիստր պ. Պիշօն։

ԷԴՒԱՐԴ VII
Թագաւոր Անգլիայի եւ կայսր Մեծն Բրիտանիայի

ԱԼԷՔՍԱՆԴՐԱ
Թագուհի Անգլիայի եւ կայսրուհի Մեծն Բրիտանիայի

Յուլիսի 21-ին Կօուսում հանդիսաւոր ճաշկերոյթին Անգլիական թագաւոր Էդուարդ VII-ի ճառը, որ նա արտասանեց մեր Թագաւոր Կայսր և Թագուհի Կայսրուհու կենացի վրայ։

«Ձերդ Մեծութիւն։ Թագուհուն և ինձ անցեալ տարի Ռևէլում ցոյց տրւած սրտագին և բարեկամական ընդունելութիւնը չենք մոռացել և ես հպարտանում եմ նրանով, որ կարող եմ ողջունել Ձերդ Մեծութիւններին անգլիական ջրերում։ Ձերդ Մեծութիւնը, ինչպէս և իմ Թագուհին քէոռաղջիկը, օտարներ չէք հանդիսանում Անգլիայում, մանաւորապէս Ուայտ կղզում։ Ես ուրախ եմ, որ Ձերդ Մեծութիւնը առիթ է ունեցել տեսնելու թերևս ամենահզօր և զօրեղ նաւատորմը, որպիսին երբևիցէ հաւաքւած է եղել. բայց ես հաւատացած եմ, որ Ձերդ Մեծութիւնն այդ նաւատորմի վրայ կընայէ ոչ իբրև պատերազմի նշանակի վրայ, այլ ընդհակառակը՝ իբրև մեր ափերի, մեր առևտրի պաշտպանութեան վրայ և ինչոր բարձր է ամենից, իբրև խաղաղութեան շահերը պաշտպանելու միջոցի վրայ։ Ես այս տարի առիթ ունեցայ ընդունելու Պետական Դուման ներկայացուցիչներից ոմանց և հարկ չըկայ ասելու, թէ ինչ հաճոյք ստացանք ես ու թագուհին նրանց ընդունելով։ Յուսով եմ, որ նրանց այցն Անգլիա հաճելի էր նրանց համար։ Ներանք կատարեալ հնարաւորութիւն ունէին տեսնելու այս երկրի շատ անձերի և շատ հաստատութիւններ, և ես յոյս ունիմ, որ նրանց տեսածը ուժ կըտայ երկու երկրների միջև գոյութիւն ունեցող բարի զգացումներին։ Այնուհետև ես պէտք է շնորհակալութիւն յայտնեմ Ձերդ Մեծութիւններին Ձեր գալստեան համար և պէտք է արտայայտեմ Ձեզ այն մեծ հաճոյքը, որ ես ու թագուհին ըզգում ենք, ընդունելով Ձեզ»։

ԼՈՆԴՈՆ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱ
Թագուհի Կայսրուհի Ռուսիայի

Եղբարդ Թագաւորին պատասխանելով, մեր Թագաւոր Կայսրն արտասանեց անգլերէն հետեւեալը.

«Ինձ մեծ գոհունակութիւն է պատճառում իմ սրտագին երախտագիտութիւնը յայտնելու այն սիրալիր խօսքերի համար, որոնցով ձերդ մեծութեանը հաճելի էր ողջունել Կայսրուհուն և ինձ բրիտանական Ջրերում։ Այն փառահեղ նաւահանդէսը, որին ներկայ էի Ես, կատարեալ վկայ է հանդիսանում Անգլիայի մեծութեան։ Այն բարեկամական ընդունելութիւնը, որ ձերդ մեծութիւնները և ձեր ժողովուրդը ցոյց են տուել Պետական Դումայի անդամներին, նմանապէս և ձմեռը իմ նաւախմբին, թող դա զարգացման գրաւական լինի Մեր երկրների միջև եղած սրտագին յարաբերութիւններին, որոնք հիմնւած են ընդհանուր շահերի և փոխադարձ յարգանքի վրայ։ Հաստատ համոզւած լինելով, որ այդ ցանկութիւնները կիրագործւեն, Ես խըմում եմ ձերդ մեծութեան, նորին մեծութեան թագուհու, արքայական ընտանիքի և բրիտանական կայսրութեան բարգաւաճման կենացը։

ՆԻԿՈԼԱՅ II
Թագաւոր Կայսր Ռուսիայի



ՄԵՐ ԿՈՒՐՕՐՏՆԵՐԸ. ԲՕՐԺՈՄ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԽԱՇՆԱՐԱԾՆԵՐԻ ԲՈԶՔ

ՉՈՒԹԱՆ

(Ավանդություն)

Պարսկական պայծառ արեգակը վաղուց բարձրացել էր Ջաննաթաուի լեռների յետևից և իր փայլուն ճառագայթներով ողողել Մելլուի ձորերն իրանց շրջակայ բլուրներով, դաշտերով ու հովիտներով։

Ամեհնային երկարատև հանգստից յետոյ գիւղացիք գուրս էին եկել իրանց փակած խրճիթներից. սկսել էին նրանց գարնանային աշխատանքները։

Ամայի, անմարդաբնակ դաշտերը նորից կեանք էին առնում, լսւում էր գեղջուկի պարզ ու մելամաղձոտ երգը, սայլի անիւների ճռինչը. շարժողութեան մէջ էին երկար ժամանակ անգործ մնացած ձեռքերը, հոսում էր բանւորի քրտինքը...

* * *

Ցորս կողմից վոքրիկ բլուրներով շրջապատւած մի գեղեցիկ հովտում աշխատում էր ծերունի Ալին իր մի զոյգ սիրուն, ուժեղ եղներով։

Նիւտ վաղ լոյսը նոր բացւելիս նա արան էր եկել և արօրով վարում էր իր վոքրիկ, արգաւանդ դաշտը։ Երկար ժամեր նա աշխատում էր. արդէն կէսօրին մօտ էր. եղները յոգնել էին, քրտինքը ողողել էր նրան, իսկ նա դեռ շարունակում էր։

Աշխատում էր նա մտազբաղ, համարեա անպայմ. աշխատում էր և մտածում... Ի՞նչ մտքեր էին կուտակւում նրա պատառ գլխում։ Գուցէ դիւղացու անվերջ հոգսերն ու ցաւերը, ընտանեկան հաղար ու մի պահանջները... Ո՛չ. մի տարօրինակ, նրա հասակին անվայել միտք էր տանջում նրան։ Մի չար օձ էր գալարւում նրա կրծքում և շարունակ կրծում նրա սիրտը...

Դա մի պատկեր էր. որ մեխւել էր նրա գլխում, չէր հեռանում նրա աչքի առաջից. և՛ հրապուրում էր նրան, և՛ տանջում. հեռացնել այդ իր մտքից նա չէր կարողանում...

* * *

Վաթսուն երկար տարիներ նա ապրել էր նահապետական միամիտ, անարատ կեանքով, վարժւած միայն փիղիքական չարքաշ աշխատանքի։ Նա սովորել էր չարչարւել վաղ առաւօտից մինչև երեկոյ, իսկ աշխատանքից յետոյ էլ հանգիստ ու խոր քուն մտնել։

Իսկ այժմ ահա մի քանի ամիս է, որ նա զրկւել է հոգեկան անդորրութիւնից. քունը դժւարութեամբ է փակում նրա աչքերը. ցերեկը ալեկոծ մտքերից է տանջւում նա, իսկ գիշերը ցնորալի երազներից...

Միքանի ամիս էր միայն, որ նա ամուսնացրել էր իր որդուն, և այն օրից, որ գեղեցիկ սևաչեայ Լէյլանը նրա հարսն էր դարձել, ճիշտ նրան հէնց առաջին անգամ տեսած րոպէից ծերունի Ալին իր հոգու մէջ մի տարօրինակ ցնցում էր զգացել։ Վայրկենապէս նրա միտքը կաշկանդւել էր մի, իր համար բոլորովին անհասկանալի զգացմունքով։ Զգացմունք, որ սակայն ինչպէս մի հրդեհ հեռգհեռէ ծաւալւել ու բոլորովին համակել էր նրա ողջ էութիւնը։

Նա սիրահարւել էր իր հարսի վրայ...

Շատ անգամ էր նա դողալով ու ամաչելով մտածում այդ յանցաւոր սիրոյ մասին։ Նա զգում էր թէ որքան զզւելի է դառնում ինքը, սակայն տանից հեռանալ կորչել կամ սպանել ինքն իրան չէր համարձակւում։ Մի աղօտ յոյս միշտ պահում էր նրան...

* * *

Այդ առաւօտ ևս նա սովորականի պէս շատ վաղ զարթեց։ Նախընթաց օրը նրա որդին գործով քաղաք էր գնացել և այդ օրը նա ինքը պիտի գնար արան աշխատելու...

Երբ ծերունի Ալին բացեց կիսամութ խրճիթի դուռը դուրս գալու համար, բացած դռնից լոյսի մի մեծ հոսանք բաւականին լուսաւորեց խրճիթի ներսը, ուր տախտի վրայ դեռ քնած էր Լէյլանը։

Քնած զրուխան մէջ նա յետ էր ձգել վերմակի ծայրը, որով պարզ երևան էր հանել իր հրապուրիչ անմահան կրծքի կէս մասը և մի թևը, որ նոյնպէս կիսով չափ մերկ էր։ Նրա դէմքը ևս, որ նա միշտ խնամքով ծածկում էր, այժմ բոլորովին բաց էր և ծերուկ Ալին մի անգամ ևս զմայլեց այդ դէմքով, որ նրա տանջանքների սկզբնապատճառն էր եղել։

Տեսնելով այդ ամենը, շփոթւած ու ապշած ծերուկը մի րոպէ կանգ առաւ դրան առաջ։ Րոպէն շատ յարմար էր. նա ուզում էր գէթ մի անգամ համբուրել այն հրաշալի դէմքը, այն հրապուրիչ կուրծքը, այն փոքրիկ, կարծես մանկական ձեռքը... Կանգնեց, մտածեց և յանկարծ կարծես քնից սթափւելով, դուրս փախաւ խրճիթից...

Ամօթն ու երկիւղածութիւնը յաղթող հանդիսացան...

(իսլիմո ղորեում վղոչու բանիանդղոլ)

ՀՈՑՈՎ III ՀԱՆԴՈՒՅՑ

Առաւօտից մինչև կէս օր աշխատել էր նա արիւնքրտինք մտածելով ամեն ջանք գործ դնելով մոռանալ այն տեսարանը, որ պատահմամբ առաւօտը բացել էր նրա առաջ։ Նա միտքը այս ու այն կողմ էր դարձնում, փակում էր աչքերը, բայց չէր տեսնել գեղեցիկ Լէյլանին նա չէր կարողանում։ Ինչպէս գայթակղութեան մի հրապուրիչ խնձոր նա շարունակ կախւած էր նրա դլխավերևը։

Արևն արդէն մօտեցել էր զենիթին և իր ջերմացնող ճառագայթներով աւելի էր տաքացնում ծերուկի դլուխը, արիւնը, սիրտը...

Նա այժմ աւելի անհամբեր ու անհանդիստ էր դարձել։ Երբ մտածում էր թէ արդէն մօտեցել է այն ժամը, երբ Լէյլանը հայց պիտի բերէր իր համար, նրա սիրտը միշտ մի առանձին թափով էր բաբախում և նա շարունակ իր սպասող հայեացքն էր ուղղում դէպի այն կողմը, որտեղից պիտի երևար նա։

Եւ հարսը չուշացաւ։

Կէս օրի դէմ երևաց նա մօտիկ բլրի վրայ։ Բեբրեց կապոցով հացը, դրեց նրա մօտ և նոյնպէս լուռ ու ծածկւած յետ դարձաւ դէպի տունն։

Սակայն ծերունին այլևս չը կարողացաւ զսպել իրան։ Թեթև երիտասարդի ճարպիկութեամբ նա վրայ ընկաւ նրա յետևից և առաւ նրան իր գրկի մէջ...

. . . . . .

Ամայի բաց դաշտում խորին լռութիւն էր տիրում։ Շրջակայ բլուրները թագցնում էին նրանց մօտիկ ճանապարհով անցնողների տեսքից։ Ոչոք չը տեսաւ նրանց այդ դրութեան մէջ...

***

Սակայն Աստւած տեսնում էր այդ յանցանքը և իր ահաւոր ցասումով պատժեց մեղսագործ ծերուկին։

Նրա հրամանով պատուեց երկիրը և նրա մէջ կուլ գնաց Ալին իր արօրի (չութի) հետ միասին։

Այդպէս է պատմում ժողովրդական աւանդութիւնը, տալով այդ փոքրիկ դաշտավայրին Չութ-ըաթման անունը, որ նշանակում է ջրօրի խորտակման տեղ։

Լէօնիդ



ԻՄ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆԻՑ

(Ջաֆական փոխադարձ շնորհաւորութիւն)

Եկաւ գարուն, եկաւ սիրուն,
Բերաւ ծաղիկ անհամար.
Բայց հոտաւէտ ծաղկանց միջին
Ծաղիկ չկայ ինձ համար։

Անգութ ձեռքով, դաժան ձեռքով
Իմ ծաղիկը քաղած է.
Վարդս չկայ, զարդս չկայ—
Սիրտս այրած, դաղած է։

Անգութ ձեռքը խնդութիւնս
Յափշտակեց ու տարաւ,
Կանաչ-կարմիր իմ զգեստիկը,
Իմ գարունը սև՛ արաւ...

Շար. Թումանեանց

ՄԱՐԳԱՐԱՏԱԾ ԶՂԻՆՆԵՐ

Պայծառ արևը կապոյտ երկնքից իր ոսկեշող ճառագայթները գցել էր պատուհանիս։ Երկնքի վրայ սլանում էին նոսր ու սպիտակ ամպիկներ, կարծես ցնորքներ լինէին...

Սեղանիս վրայ, յախճապակեայ վազի մէջ, մարգարտածաղիկներ կային։ Այդ համեստ, փոքրիկ ծաղիկները սիրում են գարուն, զով օդ, երկնի լազուր, պայծառ արեգակ, դէպի որն այժմ էլ նրանք ձգում են իրենց վարդաշող ու զեղանի գլխիկները, ինչպէս սիրասուն մանուկները դէպի իրենց սիրելի մայրիկը։

Երեկոյ է... Արևը մայր մտաւ իր հրաժեշտի համբոյրը, ոսկեայ ճառագայթով, ուղարկելով մանուկ մարգարտածաղիկներին... Եւ վշտագին, լքւած, նրանք կամացուկ սեղմեցին իրենց թերթիկները և գլխիկները խոնարհեցին։

Իմ սիրտը ցաւեց, և ես լամպարը վառեցի ու դրի ծաղիկների մօտ՝ յուսալով, որ նրա լոյսը կը զարթացնէ մանկիկներին, և նրանք նորից կը բարձրացնեն իրենց գլխիկները և նորից կըբանան սկաւառակները...

Սակայն մարգարտածաղիկները չուղեցին լամպարի լոյսը և չը բացան իրենց ծաղկապսակները։ Նրանց պէտք էր գարնան արև, լազուր երկինք, որով սլանային նոսր ու ճերմակ ամպերը, զով ու անուշաբոյր օդ և թռչնակների ծլւոց...

Լամպարը հանգցրի. ես ամօթահարւեցի, որ ուղեցայ որքացած մանկիկների համար արեգակը փոխարինել լամպարով...

Մութ երկնքից մարգարտածաղիկների վրայ համեստութեամբ նայում էին նաղելի աստղիկները դողդոջ, և լուսնեակը համբուրում էր նրանց սեղմւած գլխիկները՝ յուսալով, թէ պաղ համբոյրներով կարթնացնէ նրանց. բայց իղուր. մանկիկները լուսնին էլ չէին ուզում. նրանց արև էր պէտք, միայն արև...

Առաւօտեան նորից յաղթական կերպով բարձրացաւ մանուկ արևը, բայց-աւաղ,—նրա ճառագայթն էլ արդէն անզօր էր արթնացնելու մարգարտածաղիկներին!

Կէս գիշերին անհուն վշտից մեռել էին խեղճ փոքրիկ մարգարտածաղիկները. նրանք մեռել էին հեռու իրենց հարազատ սիզաւէտ մարգագետնից, որ շրջապատւած է թխաւենու անտառով և որտեղ թռչնակները այնպէս բերկրալիր օրհներգ են երգում մատաղ գարնանը ու խոխոջում են կարկաչահոս ու վճիտ առուակները։...

Մուսեան

Վեհափառ Տ. Տ. Մատթէոս Կաթողիկոսը Թիֆլիսում

Կիրակի, յունիսի 14-ին ցերեկ-ւայ 11½ ժ. Ամենայն հայոց Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի յատուկ գնացքը կանգ առաւ Թիֆլիս կայարանում, որ լիքն էր ահագին բազմութեամբ։

Գնացքը կանգ առնելուն պէս վագոնը մտան երկրիս փոխարքայի ներկայացուցիչ հայազն հերոս գեներալ Լազարեանի որդին և ողջունեց Նորին Վեհափառութեանը երկրիս

Պիեօն
Փրանս. արտաք. գործերի մինիստր

փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի կողմից, քաղաքացիական գեներալ պ. Ալէքսանդր Ռիչմիչեան՝ Թիֆլիսի հայութեան կողմից, իշխան Նիկոլայ Արղութեան-Երևանբազուկ՝ ազնուականութեան կողմից և այլն և այլն։

Կայարանի արքայական դահլիճներում կովկ. զանազան հաստատութիւնների, ընկ. երկաթ. ներկայացուցիչները դիմաւորեցին Վեհին ոքրոտալից ողջոյններով։ Արտասանեցին ճառեր Թեմիս ս. առաջնորդը, Կովկ. Հ. Բ. Ընկ. խորհրդի նախագահը և այլք։ Ապա, հայոց ազգընտիր Կաթողիկոսը նստելով վեց ձիանի բաց կառք, վեհաշուք հանդիսով, շրջապատուած երկրիս փոխարքայի թիկնապահներով և ժողովրդի անհամար կառքերով, ուղեւորուեց Վանքի Մայր Տաճարը։

Բոլոր այն փողոցները, որ Նորին Վեհափառութիւնն անցնում էր, լի էին ժողովրդի ահագին բազմութիւններով։ Տների պատշգամբները, պատուհանները պճնուած էին գորգերով և ծաղիկներով։ Ալէքսանդրեան այգու հանդէպ Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց ընդունել գիմաւորող հայ հոգևորականութեան և եկեղեցական հրաշափայլ թափորն այստեղից ամպհովանու տակ առնելով Հայոց Հայրապետին անցաւ Վանքի մայր Տաճարը, ուր Նորին Վեհափառութիւնը գոհացողական մաղթանք կատարելով, և մի յուզած ճառ արտասանելով բարձրացաւ Վեհարան։ Այստեղ Թիֆլիսի նահանգապետը և այլ բարձրաստիճան պաշտօնեաները բազդ ունեցան ներկայանալու Նորին Վեհափառութեան։



Կլեմանսօ
Փրանս. ex-մինիստր նախագահ

Ապա կէս ժամ յետոյ Հայոց Կաթողիկոսը շուքով այցի գնաց մեր դարաւոր դրացի վրացիների Սիօնի Մայր Տաճարը, ուր ընդառաջ եկան վրաց հոգևորականութիւնն ու ժողովուրդը։

Վերադառնալով վեհարան Նորին Սրբութիւնն այցելեց երկրիս փոխարքայ կոմս Վարանցով-Դաշկովին և նրա ամուսնուն։ Սիրալիր ընդունելութեան ժամանակ Նորին Վեհափառութեան փոխարքան յայտնեց կայսերական պալատից իր ստացած հեռագիրը, որ բովանդակում էր այն մեծ տպաւորութիւնն ու գոհանակութիւնը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը թողել էր Թագաւոր Կայսեր և Թագուհի Կայսրուհիների վրայ։

Փոխարքան և իր կոմսուհի ամուսինը Վեհափառ Կաթողիկոսին փոխայցի եկան, Նորին Սրբութիւնը վեհարան վերադառնալուց, կէս ժամ անց։

Այստեղ փոխարքան ղրուգելով և տաճկահայերի ազգ. ժողովի նախագահ պ. Մինաս Չերազի հետ, որ ուղեկցում էր Վեհին Կ.-Պօլսից մինչև ս. Էջմիածին, իր սիրալիր դժգոհութիւնը յայտնեց պ. Չերազին, որ Վեհի հետ ինքն էլ չէր գնացել փոխարքային։ Սակայն սա իր պատմութիւնն ունի, որ կանենք մանրամասն, պահանջելով և մենք բացատրութիւն, թէ ինչու պ. Մինաս Չերազ ոչ Պետերբուրգում և ոչ Թիֆլիսում Վեհափառ Կաթողիկոսի շքախմբի հետ չներկայացաւ մեր

Դելկասէ
Փրանս. ex-մինիստր

Թագաւոր Կայսրին և Նրա փոխարքային։

Ազգընտիր Հայրապետին Թիֆլիսում անընդհատ ներկայացան ազգաբնա-

ՏԱՃԿԱՍՏԱՆ. ԶՄԻՒՌՆԻԱ, ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

կութեան, հաստատութիւնների, ընկերութիւնների բոլոր ներկայացուցիչները։

Սահակ Սահակեան
Տեսուչ Ներսիսեան Դպրանոցի.

Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց այցելել Մեսրոպի բերդը, ուր ամփոփուած է մեր Վարդան Մամիկոնեանի Շուշանիկ դստեր վրայ Վաղգէն Թագաւորի թագուհի-ամուսնու աճիւնը։ Այստեղ Վեհին ներկայացան կալանաւորները։ Եկեղեցու քահանայ Տ. Տ. Գրիգոր ք. Մաթինեան զեկուցում տուաւ բերդի և եկեղեցու մասին։ Վեհափառ Հայրապետը մի սրտառուչ ճառով մխիթարեց կալանաւորներին։

Յունիսի 18-ին Վեհափառ Կաթողիկոսը, շրջապատուած հոգևորականութիւնով և ժողովրդի անագին բազմութեամբ, կատարեց հոգեհանգիստ և բացաւ Արխատակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի յուշարձանը, որ կանգնեցրած է գերեզմանի վրայ Վանքի Տաճարի բակում։

Նոյն օրը, հինգշաբթի, յունիսի 18-ին, երեկոյեան 8½ ժ. պաշտօնապէս ներկայացաւ Վեհափառ Կաթողիկոսին Լիբօնի գրականագէտների Միջազգային Մնայուն Կոմիտէի հանձնյն Ռուսաստանում լիազօր Տիգրան Նազարեան և զեկուցանեց հետևեալը.

«Վեհափառ Տէր.

«Լիբօնի գրականագէտների, արուեստագէտների և խաղաղասէրների միջազգային մնայուն կոմիտէին զեկուցանելով Վեհափառութեանդ կենսագրութիւնը, ստացայ հետևեալ որոշումը՝



Սեթիանու Նազարեանց
մահուան 30 ամեակի առթիւ.

«1) Ողջունել անվեհեր գործիչ և մարդասէր Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի հայ-լուսաւորչական XVI-դարեան պատմական գահ բարձրանալը։

«2) Աղերսել խաղաղասէր և արդարութեան հսկայ պաշտպան Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի պատկերը իր յատուկ մակագրութեամբ Լիբօնի գրականագէտների, արուեստագէտների և խաղաղասէրների միջազգային մնայուն կոմիտէին նուիրաբերելու, որը կըպահուի իբրև բարեկամական աւանդ Լիբօնի ազգային գրադարանում»։

Զեկուցանելով վերոյիշեալները Վեհափառութեանդ, խոնարհաբար հայցում եմ Ձերդ Սրբութեան բարեհաճ անօրինութիւնը։

Նորին Վեհափառութիւնը յօտընկաս բարեհաճեց լսել այս զեկուցումը և ընդունեց որոշման թուղթը, յայտնելով Իր շնորհակալութիւն ու հաւանականութիւն։

Ապա ներկայացան տիկին Հեղինէ Նաւասարդեան և Տ. Նազարեան Վեհափառ Կաթողիկոսին Գրական-Գեղագիտ. սալօնի կողմից. Տ. Հեղինէ Նաւասարդեան կարդաց հետևեալ ուղերձը.

«Վեհափառ Տէր.

«Գրական-Գեղագիտական սալօնը, որ հաստատուած է Հղբիւր-

Գրիգոր Վանցեան
մահուան տարեդարձի առթիւ.

Տպարակի համբագրութեան կից և որի նպատակն է գրականագէտներին, արուեստագէտներին և լրագրողներին մէջ, անկախ նրանց քաղաքական դաւանանքից, մացնել համերաշխութիւն, ամենաջերմ զգացումներով ողջունում է Վեհափառութեանդ շնորհաբեր գալուստը և անսահման հաճոյքով զեկուցանում Ձերդ Սրբութեան, որ ուրբաթ, յունիսի 19-ին, սալօնի հերթական գրական-երաժշտական երեկոյթը նուիրուած է ի պատիւ Վեհափառ Հայրապետիդ, և այսու հայցում է Վեհափառութեանդ, թոյլատրել շքախմբիդ շնորհաբերել այս հանդիսին։

Դրանից յետոյ Տ. Նազարեան ներկայացաւ Վեհին և մատուցանեց իր հրատարակած թերթերի մի քանի տարեայ օրինակները և Վեհափա-

ԹԻՖԼԻՍ. ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՕՐԵՐԻՆ.

ան ճեմապակու վրայ պատկերը հետեւեալ ուղերձով.

«Ազգընտիր, Սիրեցեալ Հայրապետ.

Ժամանակը, հանգամանքն ու տարածութիւնը խոչընդոտն եղան Երուսաղէմ հասցնելու անվեհեր պատրիարք Իզմիրլեանի՝ ճեմապակու վրայ, Լօնդոնում պատրաստած պատկերը Սրբազան Կաթողիկոսի Իզմիրլեանին։

ԱԼՖՈՆՍ ԹԱԳԱՒՈՐ ԻՍՊԱՆԻԱՑԻ

Անսահման երջանիկ ենք այսօր, որ մատուցանում ենք այդ նուիրական պատկերը Վեհափառ Իզմիրլեան Ամենայն Հայոց Ազգընտիր Կաթողիկոսին, Նրան, որ դեռ Երուսաղէմում կալանաւոր էր, երբ անցեալ տարի յունիս ամսին Տաքրազն առանց տատանուելու հռչակեց Ներան Վեհափառ։

Թող Աստուած շատ տարիներ պարգեւէ Վեհափառ Իզմիրլեանին հայ խաւար մթնոլորտը լուսաւորելու այն հոգով և ուղղութեամբ, որով ինքը՝ Վեհափառ Իզմիրլեանը մինչև օրս ընթացել է։

Մեծարանք, որդիական սէր և պատկառանք, վստահութիւն և սիրայօժար անձնուէր սպասաւորութիւն Ամենայն Հայոց Ազգընտիր Հայրապետ Տ. Տ. Մատթէոս II Կաթողիկոսին մատուցանում է Աղբիւր-Տարազի խմբագրութիւնն իր բոլոր աշխատակիցներով»։

Այդ բոլոր երեք ուղերձները և ի պատիւ Վեհափառ Կաթողիկոսի Գրական-Գեղագիտական ասլօնում կայանելիք երեկոյթի հրաւիրագիրը մի շքեղ թղթակալի մէջ մատուցուեց Վեհափառին։

Նորին Սրբութիւնը յայտնեց ի միջի այլոց, որ Աղբիւր-Տարազ շարունակ ստանում էր Երուսաղէմում, կարդում, և իրան մեծ սփոփանք էին պատճառում այդ հանդէսները։ Յիշեց Վեհափառն այն օրերը, երբ ինքը դեռ Կ. Պոլսում պատրիարք՝ առաջին անգամ տեսակցութիւն ունեցաւ Տիգրան Նազարեանի հետ։ Յիշեց թէ ինչպէս նա ստացաւ այն ժամանակ այդ պատկերները հայլն, հայլն։

Այդ ունկդրութեան ներկայ էին Վեհափառի ընդունելութեան ընդհանուր կարգադրիչ բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեան և սինօդի անդամ հ. Բարգէն վարդապետ։

Յուլիսի 19-ին ուրբաթ երեկոյեան ի պատիւ Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Գրական-Գեղագիտական ասլօնում կայացաւ երաժշտական երեկոյթ։ Ներկայ էին Վեհափառի շքեղ խումբը՝ Շուշու թեմի սրբազան առաջնորդ Աշոտ եպիսկոպոս, սինոդի անդամ հ. Բարգէն վարդապետ, տաճկահայ Գրիգորիս, Մեսրոպ վարդապետներ, պ. Մինաս Ջերազ և մեր գրականագէտները, արուեստագէտներն ու հրապարակախօսներն իրանց ընտանիքներով և օտարազգի հիւրեր։ Երաժշտական մասը ղեկավարում էր տ. Հեղինէ Նաւասարդեան։ Նապահանդիսին սիրալիր մասնակցեցին տ.տ. և օր.օր՝ Օ. Պ. Միխէեա, Ր. Ա. Լեփնա, Ս. Ն. Նիկոլաևա, Մարինէ Սոխակեան-Սոլովեան և Հեղինէ Նաւասարդեան։ Հ. Աբգէն ա.ք. Բագրատունու, յատկապէս այս երեկոյթի համար շարադրած, Նորելուկներին ալեգօրիա-

ԱՐՔԱՅԱԶՆ ԳԷՈՐԳ
Կրէտէի կուսակալ

բանաստեղծութիւնը կարդաց պրակնագէտ հ. Յարութիւն ք. Ճուղուրեանց։ Երեկոյթը տևեց մինչև կէս գիշեր։

Հետևեալ օրը, շաբաթ կէսօրին մեծ հանդիսով Վեհափառ Կաթողիկոսը Ներսիսեան դպրոցի նոր շէնքի հիմքը դրաւ, շրջապատուած հայ հոգևորականութեամբ և ժողովրդի



ԻՍՊԱՆԻԱ. ԱԼՀԱՄԲՐԻԱ ԱՌԻԻԾՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ

ահագին բազմութեամբ։ Ներկայ էին և Թիֆլիսի նահանգապետը, քաղաքագլխի պաշտօնակատարը, դպրանոցի հոգաբարձութիւնը, վէհի շքախումբը, մամուլի, ընկերութիւնների ներկայացուցիչները և այլն։

Ամենայն Հայոց Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսը իր ձեռքով ղրեց շինութեան առաջին քարը, երկրորդ քարը դրաւ Թիֆլիսի նահանգապետը, հետևյալը թեմիս ս. առաջնորդը, ապա պ.պ. Մ. Զերով, քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեան, Մանթաշեանի ներկայացուցիչ Առ. Սարուխանեան, դպրանոցի հոգաբարձուները, ուսուցիչները և դրականագէտներ ու հրապարակախօսներ Ղ. Ագայեանց, Հ. Առաքելեան, Տ. Նալարեան, Ալ. Քալանթար և այլք։

Օրհնութեան հանդիսից յետոյ, շատ զեղեցիկ զարդարած վրանում, նախաճաշի հրաւիրուեցին հիւրերը։ Վեհափառ Կաթողիկոսն առաջին բաժակն առաջարկեց Թագաւոր Կայսեր կենացը, ասելով՝

Նորին Մեծութեան սրտին միշտ մօտ է եղել ժողովրդի լուսաւորութեան գործը և Նա հաւատացած է, որ Ներսիսեան դպրոցը կը դատարկէ պետութեան հաւատարիմ հպատակները, արժանաւոր քաղաքացիները և հայ ազգին պիտանի անդամներ։

Երկրորդ բաժակը Թիֆլիսի նահանգապետն առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսի կենացը, յայտնելով, թէ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս II, հայոց եկեղեցու Պետը, իրան արեց մեծ պատիւ՝ հրաւիրելով դնել հիմնարկութեան երկրորդ քարը, նա մեծ հաճոյութեամբ ընդունեց այդ պատիւը, որովհետև Վեհափառի այդ հրաւէրի մէջ տեսաւ մի մեծ դրական պետութեան և եկեղեցու լծակցութեան և համերաշխ միաբան գործակցութեան լուսաւորութեան ասպարէզում։ Մատթէոս II, իբրև հայոց եկեղեցու պետ, և ինքն, իբրև ներկայացուցիչ ռուսական կառավարութեան, դնում են առաջին և երկրորդ վէմերը այն շինութեան, որ կոչւած է ուսման և կրթութեան ջահ հանդիսանալ։ Ի հարկէ, այդ քարերը նման չեն այն քարերին, որ մի գիժ գցում է մի հորի մէջ և 10 խնկօք չեն կարողանում հանել, բայց սրանք հիմնաքարեր են այն մեծ կոթողի, որ եկեղեցու և պետութեան ներկայացուցիչների ձեռքով ձգւում է իբրև հիմք կրթարանի, ուստի նա առաջարկում է Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը, Կաթողիկոսի, որի հայացքները եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների մասին նրան շատ լաւ յայտնի են։

Ապա առաջարկեցին մի շարք կենացներ, և վերջն էլ Վեհափառ Կաթողիկոսը հեռագրով օրհնութեան կոնդակ ուղարկեց պ. Մանթաշեանին, որի ծախքով կառուցանւում է Ներսիսեան դպրանոցի այս հոյակապ շէնքը։

Երեքշաբթի, յունիսի 23-ին, կէսօրին Հայոց Կաթողիկոսը բարեհաճեց մեկնել Թիֆլիսից ս. Էջմիածին։ Մեծ բազմութիւն լցրել էր թէ այն փողոցները, որով ընթանում էր թափորը և թէ երկաթուղու կայարանը։ Նորին Վեհափառութեան շքանորհ ունեցան ուղեկցելու մինչև Սանահին, Ղարաքիլիսայ, Ալէքսանդրօպոլ, Անի և ս. Էջմիածին Թիֆլիսի զանազան հաստատութիւններից ներկայացուցիչներ։

Ամենայն Հայոց աղգընտիր Հայրապետ Տ.Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի ս. Էջմիածին անփորձ ժամանելու մասին սրբազան տեղակալը Թիֆլիսում վէհին ընդունելութեան ընդհանուր կարգադրիչ, բժշկապետ պ. Բագրատ Նաւասարեանին, յանձնաժողովի նախագահ զեներալ Ա. Լէքսանդը Քիշմիշեանին և թեմ. առաջնորդի տեղապահ հ. Եփրեմ վարդապետին հետևեալ հեռագիրն էր ուղարկել՝

Կամօքն Ամենաբարձրեալի և հովանաւորութեամբն մեր ամենաողորմած Թագաւորի Նորին Սրբութիւնը ողջմբ ժամանելով Էջմիածին՝ Միածին Որդւոյ սեղանի առաջ ջերմաջերմ աղօթքներ վերառաքեց Թագաւոր Կայսրի առողջութեան, Հայոց եկեղեցւոյ բարգաւաճման և Հայկազեան ազգի բարօրութեան համար։

Տեղակալ Գէորգ Արեպիսկոպոս.

ԲՐՍՆԻԿՈՆ

Պարսկաստանի հերոս Եփրեմը Ղարաբաղցի է. կենսագրութիւնն ու պատկերը կը տպագրւի Տարազի առաջիկայ համարում։

—Երկայ օգոստոսի 25-ին Կովկասի վերջնականապէս նւաճման յիսնամեակը տօնելու է զինւորական մեծ շուքով։ Անառիկ Դաղստանի լեռների գագաթը բարձրացող և անյաղթ իմամ Շամիլին ռուսական դրօշակին խոնարհեցնողներն անառիկ Շուշու երկու հսկայ գաւակներն էին՝ գեներալ Յովհ. Լազարեան և գնդապետ Յովհ. Դրամեան։ Երկուսն էլ իրանց ծառայութիւնն սկսելով հասարակ զինւորի աստիճանից։ Ճանկալի էր, որ մեծ Ռուսաստանը, յիշատակ իր անձնւէր հերոս զաւակների, յաղթական այս յոբելեանին, նրանց ծննդավայր, երբեմն պերճ և փառքամ, իսկ այսօր մոխիր ու անծուխ Շուշին վերաշինէր։

—Ռուսական կառավարութեան մտադրութիւնը, առաջիկայ 1912 թ. Մոսկւայում համաշխարհային ցուցահանդէս սարքելու, հաւանութիւն չըզտաւ և անորոշ ժամանակով յետաձգւեց այդ մտադրութեան իրագործումը։

—Փակւած է ռուս դրականագէտների փոխադարձ ինքնօգնութեան դրամարկղը, որ դոյութիւն ունէր ութսուն տարի։

—Ադանայի աղէտի առիթով մենք ստացանք եւրոպացի դրականագէտներից, հրապարակախօսներից ցաւակցութիւններ։ Սրանք հաղորդում էին մեզ, որ իրանց բողոքներին կ. Պոլիսը պատասխանում էր վոխադարձ մեղադրանք հայերի հասցէին։ Հետաքրքրական է այժմ ինչ պատասխան պիտի տայ կ. Պոլիսը, երբ օսմանեան պարլամենտն արդէն հայերի անմեղութիւնը հրապարակախօսաւովանեց։

—Կովկ. Կայսեր. Գիւղատնտես. Ընկ. յունիսի 19-ին իր նիստում որոշեց յարգել գիւղատնտես պ. Ալէքսանդր Քալանթարի, իր եռադաշն և բեղմնաւոր անգամի, երեսնամեայ գիւղատնտեսական անխոնջ գործունէութիւնը։ Ընտրեց այդ նիստում երեք հոգուց մի մասնաժողով, որ պէտք է ծրագրէ յոբելեանի տօնախմբութեան ձևը և ներկայացնէ Կովկ. Կայսեր. Գիւղատնտես. ընկ. խորհրդին։

—Բագւոյ Հ. Կուլտ. Միութեան նախաձեռնութեամբ պ. Սամսոն Ղալայեան Թիֆ. Առևտրական դպրոցում կարդաց մի շարք դասախօսութիւններ կօօպերացիայի, սպառողական, արտադրողական, մանր վարկային ընկ. միութիւնների հաշւապահութեան մասին։ Դասախօսն ունեցաւ մեծ յաջողութիւն և այնքան ժամանակակից ու ուշագրաւ էր դասախօսութեան նիւթը, որ նոյն Կուլ. միութեան հողային սեկցիան այժմ էլ դիմել է պ. Սամսոն Ղալայեանին կարդալ մի շարք դասախօսութիւններ գաւառական քաղաքներում և գիւղերում։

ՄԱՄՈՒԼ

Օգոստոսից սկսել են Թիֆլիսում լոյս տեսնել Հորիզոն և Սուրհանդակ հայերէն երկու օրաթերթեր։ Սուրհանդակը կէս ամիս հրատարակւելով ամեն օր, այժմ մինչև աշունը լոյս է տեսնում միայն երկուշաբթի օրերը։

Հորիզոնը հայ ժողովրդի մտաւոր հորիզոնն ընդարձակելուն և նրա նեղ աշխարհայեացքը լայնացնելուն է ծառայելու, իսկ Սուրհանդակը հայ առևտրականին իր սայլակով տանելու է բացի Նալմուկա և ուրիշ աւելի քաղաքակիրթ շուկաներ։

ԹԱՏՐՈՆԻ ՀՈՒՐՋԸ

Հայ թատրոնի յիսնամեակի առիթով օդային ամրոցներ կառուցանող դրամատիկ. ընկեր. վարչութիւնն այն աստիճան լքեալ վիճակի մէջ է, որ վարչութիւնն իսկ իր տարեկան ընդհ. ժողովներին ներկայ չէր։ Փաստը այնքան է պերճախօս, որ կոմմենտարիաների իսկ պէտք չունի։ Անընդհատ, հազարներով նպաստ ստացող հայ դրամատիկ. ընկ. չը կարողացաւ կանոնաւորել հայ թատրոն. գործը և շարունակ դէֆիցիտների հետ չըկարողացաւ նա գէթ մի սեզոն ունենալ միջնակարգ խումբ, որոշ բեպերտուարով։

Ու քանի որ հայ թատրոնը լրջորէն չըպիտի արտացոլէ բարձր արւեստի ճաճանչները, աւելի լաւ է առժամանակ կազմակերպել զուտ ժողովրդական թատրոնական ներկայացումներ, անպայման, ծրագրւած որոշ բեպերտուարով։

—Վրաց ազնւականութիւնը, որ մի քանի հարիւր հազար րուբլի էր ծախսել և նախկին Արծրունու թատրոնը վերաշինել ու տւել կապալով տ. Եաւորսկային, այս տարի իր այդ թատրոնը յանձնելու է վրաց դրամատիկ. ընկ.